փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է Կատարողին, իսկ վերջինս էլ պարտավորվում է թիվ «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացվելիք հայցադիմումի շրջանակներում Պատվիրատուի առաջարկով մատուցել փաստաբանական ծառայություն: Նույն պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ ծառայությունների մատուցման գինը 300.000 ՀՀ դրամ է:

15.03.2024 թվականին տրված լիազորագրով «Ագաստ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Գոհար Մուրադյանի, լիազորել է Լևոն Պարգևի Օհանյանին իր անունից հանդես գալու ՀՀ դատական բոլոր ատյաններում (...):

Հիմք ընդունելով վերը հայտնած իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով, որ գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով, հայցվորի ներկայացուցիչը դատական նիստին չի ներկայացել, Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 30.000 ՀՀ դրամը և բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի՝ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. Անվավեր ճանաչել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի՝ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 17.05.2024 թվականի թիվ 32 որոշումը:

2. «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ից հօգուտ «Ագաստ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ից հօգուտ «Ագաստ» ՍՊԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am